

Ծնորոջ ամենագորին աստուծոյ աւարտեցաւ բանս շարադրանաց յունման, թաթևոտ երեցուէ, համապատկան երեսմանցոյ, ի թուոյ փրկչին, 1671. Քիորէնցայ քաղաքի: Իսկ ի թուոյ հայոց ՌժԻ. մարտին ամսոյն մէկն, եւ զիս զմիաւորս յիշեցէք հայցելով ազատութիւն ի տեսանէ, քանզի զրեցի ի բանտի, եւ զուր յիշեալ լիջիք ի յետուէ նազովարացոյ:

Պատմութիւնս այս շահարանեալ ի համազասական երեցուէ զաթևոտէ, զամենց մերազնեայցնազնեաց եւ զի յընդամուր ոլորտս աշխարհի եւ զի ծագաց ի ծագս տիեզերաց քազմազան զովասանաց արժանեաց՝ ի նախատիպ պատմենէ, որքան անկն էր Եստութեամբ օրինակեցաւ ի տրուալ բանասիրի՝ ումմնէ, որ եւ կոչի Պ. Վ. Մ. զնախկինն ընթերց որպէս վեժ, զմիսն իմս զերթ ըստըն, իսկ զերտորդն ծանիր որպէս իսկ է որ մահանուն, զոր բարբառ հազարացոց արտասանէ, ընծական, կամ որ ըստ ընթի, եւ զուր օրհնեալք եղիջիք՝ յորմէ լու զերկինս եւ զերկեր: Ի թուոյ փրկչին 1774. փետրվար ամսոյն ութն:

Հոս ձեռագրոյս վաւերականութեան վրայ խօսիլն աւելորդ է. վասն զի չկայ ներքին կամ արտաքին պատճառ մը՝ որ իրաւունք տայ մեղի կասկածելոս: Միայն եթէ կարելի է առարկութիւն մ'ընել, այն է՝ որ թաղէոս Երէց իւր ճառչին մէջ՝ զոր տպեց 1686ին, ամենեւին յիշատակութիւն չ'ըներ այս դիպաց: — Առ այս պատասխանելէն ետեւ՝ որ այս ժխտական ցուցմանէն հետեւութիւն մը չ'եղեր, վասն զի սոյն դէպքը լռելէն՝ հանդիպած չ'ըլլալը չի հետեւիր, կ'ըսենք՝ թէ կայ նոյն իսկ ճառչին մէջ հետք մը յիշատակութեան: Վասն զի թաղէոս իւր ճառչին սկիզբն դրած թղթոյն մէջ տեղեկութիւն տալով Եղիազար Կաթողիկոսին (1680—1691) նոյն գրոց վրայ՝ կ'ըսէ «... Նկատելով իմ զպայծառութիւն ազգին մերոյ որ ի տուչութենէ հոգւոյն սրբոյ գոյր շնորհեցեալ ի ձեռն տպագրութեան, խանգաղատիւր միշտ հոգի իմ: Իսկ զինի սակաւուց ժամանակաց անցելոց ակն արկելով ի խանգարումն նորին եւ ի պակասութիւն եկեղեցական գրեանց եւ մանաւանդ ճառչի եւ այլոց սոցին նմանեաց, վարանէի ի տարակուսանս...»: Թաղէոս զայս ամենայն կը գրէ՝ նկատելով ինք զինք ի Սպասան, որմէ ետեւ կը յաւելու՝ թէ ինչպէս աղօթիւք Եղիազարայ ճամբայ ելաւ դէպ յԵւրոպա: Հոս այնպէս կը խօսի թաղէոս, իբր թէ Սոսնանի մէջ

¹ Այս ի Բանդի բառն հոս ամբողջին չի յարմարիր: Վասն զի ամբողջ պատմութիւնն իբրեւ անցեալ կը պատմուի, եւ յայտնի կը յիշուի թէ արձակուած է ինքն թաղէոս Երէց ի բանտէ: Կարելի է ըսել՝ թէ այս վերջին յիշատակարանս առաջին ընդօրինակողէն գրուած ըլլայ բանտի մէջ:

² Այս հանելուկն անք կ'առեղծուէր այսպէս՝ Պիտրոս Վարդապետ Մարտիրոս: Առաջին երկու բառերուն վրայ խնդիր չի կրնար ըլլալ: Կը մնայ երրորդն՝ զոր հասանական կը համարենք ընթեանուէ Մարտիրոս, վասն զի նոյն բառն արարելէն ցանկութեան, եղչ կը նշանակէ եւ միւս կողմանէ Մով կը սկսի եւ մեր ազգին մէջ սովորական մականուններէն է:

քաջ տեղեկութիւն ունէր հայ տպագրութեան անցից, տպագրեալ գրոց տեսակաց վրայ, եւ այլն, զոր կարծենք առանց ի մերձուստ ծանօթութեան դժուարին էր գիտնալ: Բաց աստի՛ ջրըջափ 1673ին հրատարակեալ Արեւի Ժամագրոց ճակատն իւր անունն ալ կը կենայ, պէտք է որ ըսենք՝ թէ Եղիազար Կաթողիկոս չնստած՝ որ է 1680էն յառաջ՝ թաղէոս Եւրոպա էր, թէ եւ այս ալ չի յիշուիր ճառչոյն մէջ: Նաեւ Սահանայ անուանեալ կտակին մէջ (1676) կը յիշատակուի թաղէի բանտ մանելն եւ արձակուիլն այսպէս. «Փրկեցեալն ինեւ ի բանտից եւ ի կապանաց», թէ եւ մեր հրատարակած ձեռագրոյն մէջ յայտ մասին Սահանայ գործակցութեան ամենեւին յիշատակութիւն չ'կայ: —

Այս ձեռագիրս, ինչպէս ընթերցողը տեսաւ, Սահանայ Աստուածաշնչին տպագրութեան ինչ ինչ պարագաները եւ տպագրութենէն ետեւ հանդիպածները մեզի ծանօթացուց, ինչպէս նաեւ յիշեալ երեք անձանց կենսագրութիւնն՝ որով Սահանայ Աստուածաշնչին յիշատակարանէն միայն առնուած թերի տեղեկութիւններն ամբողջացան:

Մինչեւ հիմայ գիտեինք՝ թէ թաղէոս 1673ին Մարտիրոս էր, բայց թէ ինչպէս՝ անծանօթ էր: Այս ձեռագիրս մեր առջեւը դրաւ թաղէի Երեցու Եւրոպա գալուն ստոյգ ժամանակը եւ ծանօթացուց մեզ մինչեւ 1671 անցուցած կեանքը: Անկէ ետեւ թաղէոս Մարտիրոս անցած եւ Սահանայ հետ ընկերացած է, եւ կ'երեւայ թէ 1674էն ետեւ՝ երբ Սահան մեռաւ, Եւրոպայէն մեկնած եւ վերստին Սպասան դարձած ըլլայ: Վասն զի Սահանայ անուանեալ կտակէն կ'իմացուի՝ որ 1674ին տակաւին Մարտիրոս էր, բայց ոչ այնուհետեւ. ինչու որ 1676ին հրատարակեալ կտակն՝ որչափ կ'երեւայ՝ զինք իբրեւ հեռի ի Մարտիրոս կը նկատէ: Եւ իրօք՝ գէթ 1680էն ետքը թաղէոս Սպասան էր, վասն զի ճառչին վերոյիշեալ թղթոյն մէջ Եղիազար Կաթողիկոսին աղօթիւքն Եւրոպա ճանապարհորդելուն յիշատակութիւն կ'ընէ: —

Կը մնայ մեր մէկ կասկածը յայտնել Սահանայ կրօնին վաւերականութեան նկատմամբ. որով նաեւ թաղէի վրայ գրուած պարտաւանքներն լոկ երկուքին՝ թաղէի եւ Սողոմոնի մէջ եղած հակառակութեան հետեւութիւնն համարիլ: Գործոյս սահմանը չի ներեր հոս ամբողջ կտակն յառաջ բերել, բայց ո՛վ որ մի անգամ ընթեանու, ստուգիւ կ'ունենայ նոյն կասկածը: